



**U. S. D. F. U. S.**

ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԵԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՏՈՒՐԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ  
**Ա Մ Ս Ա Գ Ի Ր**

ԱՐԵՎԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՎԱԾՔ ԴԵԿԱՆԱՏՈՒՄ 1894 թ:

## ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

•ՅԱՆՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՅՆ ծՈՒՆՐ ԿՐԿՆԵՅՑԻ...

Եւ եւ թէպէտ և նկի առ ծեզ  
նորարք, ոչ ըստ առակնօբթեան  
ինչ բանից իմաստովինան  
պատճի ձեզ զիմաստիինան  
Ասունը: զի ոչ ենի ի մոխ  
եղի գիտել ինչ ի ծեզ բայց  
մայս զիտուս եւ զոյն ի  
խաշ ենեալ: ԱԿոբին, թ. 1-2:

այց միայն զՅիսուս Քրիս-  
տոս — ի՞նչպէս քաղցր է  
և միանգամայն ի՞նչպէս  
ծանր կրկնել այս խօսքե-  
րը այն ժողովրդին, որ մի  
որոշ հայեցակի ալիք զբե-

թէ նոյն տրամադրութիւն-  
ներն ունի, նոյն հոգեկան և բարոյա-  
կան վիճակը, ինչ որ ունեցելէ Առա-

Քեալի կենդանի քարոզութեան ունկնդիր  
Կորնթոսի համայնքը:

«Եւ ես տկարութեամբ և երկիւղիս և դուզութեամբ բազմաւ եղէ առ ձեզ», աւելացնումէ ս. Պօղոս այս խօսքերից յիշոյ և մեզ գժուար չէ բացատրիլ այդ տկարութիւնը այդ երկիւղը: Կորննծոս մի վաճառաշահ նաւահանգիստ էր, ժամանակի քաղաքակրթթութեան, յոյն՝ հոռմէական աշխարհի կեդրմնում վայելում էր այդ աշխարհի բոլոր բարիքն ու շարիքը, մեծ հոչակ էր սաացել մանաւանդ զուարձաւէր, սանձարձակ երիտասարդութեան ընծայած իւր գիւրութիւննեներով, այս մինչև խսկ այդ խնձոյքի աւելցուքից առաջ եկած ապականութիւններով — և ահա այդ քաղաքը նուաճելու էր եկել մուլթ արևելքից մի խեղճ խորանակար, որի բոլոր ցիցը, բոլոր զենքը մի անուն էր միայն՝ «Ցիտու

Քրիստոս։ ինչպէ՞ս չտկարանար նաև ինչպէ՞ս դոզ չեղնէր նորա սիրաը։ Աստուծոյ մասին կամենութէր նա վկայութիւն տալ մի հաւաքակութեան առաջ, որի բոլոր ուշն ու միաբը գէպի աշխարհն էր ուղղուած, գէպի նիւթականը։ Գիտուն մարդոց, փիլիսօփաների հետ պէտք է նա գործ ունենար, որոնք աշխարհի տակն ու զլուխը քննել էին, ամեն բան գիտենալու յաւակնութիւն ունեին, մի ժողովրդի հետ, որ սովոր էր նոցանից իմաստուն խօսքեր լսել բարձր զիտական բաներով զբաղուել։ իսկ ինքը Պօղոս ինչ ունէր, ինչ զիտեր, ուրիշ ոչինչ, «բայց միայն զջիւուս Քրիստոս և զնոյն ի խաչ ելեալ»։

Ժամանակը փոխուած է արդարեւ փոխուած են նաև շատ սպայմաններ, բայց դրութիւնը նոյն է։ այսօր էլ նոցն տկարութիւնը, նոյն երկիւղը անկարող է զգալ աւետարանի ամեն մի աշակերտ, որ Աստուծոյ վկայութիւնը դնելու է ելնում մի աշխարհի առաջ, որ իւր իմաստութեան վերայ մեծ համարումն ունի, շոյումէ իւր ինքնասիրութիւնը, փայփայում իւր ախտերը, արեւելքից լնի նա եկած թէ արեմուաքից, աշխարհի բուլոր գիտութեան և արու եսանելին ծանօթ, թէ տգէտ մի անձն՝ նորա իմացածը, նորա քարոզածը մէկ է միշտ և միայն։ «Յիսուս Քրիստոս և նոյն ի խաչ ելեալ», իսկ այդ խօսքերը արաւասաննելուն պէս՝ նա պէտք է զգայ, որ աշխարհի իմաստութեամբ լի ականջների համար բոլորովին խորթ բան է ասում։ Ուստի և ակամայից երկիւղը սպաշարումէ նորան։ Վակայն այդ երկիւղը յուսահատութեան և վհատման երկիւղ չէ, եթէ նա Առաքեալի հետ մէկ տեղ կրկնել կարող է։ «Եւ բանն իմ և քարոզութիւն ոչ պատիր բանիւք իմաստութեան այլ արդեամբ հոգւոյն և զօրութեամբ»։ Հոգի՝ ահա թէ ինչն է, որ աշխարհը նուածելու զօրութիւնն ունի, որ քրիստոնէական քարոզութիւնը արդիւնաւէտ կացուցանել կարող է։ Եթէ այդ զօրութիւնը, այդ արդիւնքը երևան չէ զալիս, ոչ թէ նորանիցն է, որ Յիսուսի անունը, ճշմարաւ-

թեան աւետարանը, իմաստութեան պատրանքին յաղթել չէ կարող, այլ որ նոյն ինքն այդ աւետարանը ոչ արդեամբք հոգւոյն և զօրութեամբ», այլ «պատիր բանիւք իմաստութեան» է քարոզուում։

Այսօր Առաջարկ իրեւ Մայր Ամուի պատգամարեր հայ ժողովրդի համար, կեանքի մի նոր շրջան սկսելու պատրաստականութեամբ՝ երբ մի հայեացք՝ է ձգում հին տարուայ և անցեալ տարիների վերայ, գիտումէ տպագան, զիտումէ և իւր շուրջ ցիր ու ցան հօար՝ ինչ և տեսնում արգեօք, շատ բան անմիմիթար, շատ բան սպակաս, շատ բան անսախանձելի վիճակի մէջ, տառապանք, արհաւերը, նեղութիւն, տղիտութիւն, անկարգութիւն . . . բայց մի սպակասութիւն, որ ամենից զգալին է և միակ անաւանելին՝ այդ հոգու բացակայութիւնն է։ Զկայ այն հոգին, որ ծերանութիւն և կենդանութիւն սփուրը, ընդգարմացած անդամները շարժման մէջ զներ, անկեալին ոյժ տար, վհատեալին եռանդ ներշնչեր, քնի մէջ ընկդմածին արթնացներ, արբեալին զգասաւացներ, ստոր կրքերը զագեր, եսական անարդ ձգտումների վերայ իշխող հանդիսանալու, ուրիշ հանէր ուղրին, ի մի բերեր, մի գաղափարի, մի սուրբ անուան տակ։

Մի սուրբ անուան տակ . . . Այդ սուրբ անուան իւր վերայ կրումէ մեր ժողովուրգը. նա հեթանոս չէ, աւազանին մլըրտութեամբ նորա ամեն մի անդամն ընդունել է և պիտի սպաշէր այն հոգին, որ Քրիստոսի սուրբ անուան է բաշխում։ բայց Նա ընդունած չնորհքի հետ փարուումէ այն պէս ինչպէս վարուել է երբեմն Կորնթոսի նորադարձ համայնքը Առաքեալը նորան մի անուան էր քարոզել, մի հոգի բաշխել. բայց «պատիր բանիւք իմաստութեան» և անձնական կրքերով զեկավարուող այդ համայնքը շատ ժամանակ չանցած՝ կանգնել պիտույշեր, «և Պօղոսեան եմ» և միւսը՝ թէ ես Ապօղոսեան և այլ ոք՝ թէ ես Կիփայեան, և մի ուրիշը՝ թէ ես Քրիստոսեան»։ բաժանելով այսպէս մի հոգին, փախանակ Տիրոջ՝ ծառա-

Ների երկրպագուն դառնալով փոխանակ իս-  
կական աղբիւրից առնելու հոգի և կեանք և  
ձմարտութիւն՝ առուներին զիմելով և ապա-  
ցուցանելով, ու փակական լոյսը դեռ չէ աեր-  
նում, այլ կիսաբաց բժոտ աչքերով անորոշ  
անդո՞ն մի շամանզադ է միայն նկատում:

! Այսիւը չե՞մ անում միթէ և մեր ժողովուրդը, նա էլ մի ինչ որ լոյսի հաևից է ընկած, նորան էլ մի նոր քարոզութիւն է եղել և այդ քարոզութիւնը յառաջ է բերել բաժանումն հոգիների։ Ո՞ի շարք անուններ գոյնզգոյն դրօշակների վերայ գրելով՝ նա հակառակ ճանապարհներով գեղակի մի նոր աշխարհ է տռառջնորդում անջատ անջատ բանակների։ Յաւալի տարբերութիւնն այն է, միայն որ աշխարհի իմաստութեան հետեւող Կորնթացիներին աւետարանի ծշմարտութիւնն էր քարոզուած և նոքա տարբեր անուան տակ, տարբեր հոգւով գեղակի այդ ծշմարտութիւնը դիմելու ցանկութիւն ունեին, մինչդեռ այստեղ աւետարանին հետեւող մի ժողովուրդ աշխարհի իմաստութեանն է ծանօթացել նորակարագեաններին է հետեւում։ «Խսկ արդ՝ բաժանեալ ինչ իցէ Քրիստոս» հարցնումէր առաքեալը և մենք ստիպուած ենք հարցներ։ Քաժան բան է, միթէ ծշմարտութիւնը։ Ո՞իթէ այն ծշմարտութիւնը, որ մեր հայրերի համար ճանապարհ էր գեղակի կեանք, դադարումէ մեզ համար նոյնը լինելուց և այն անունը, որ մեր հայրերի առաջնորդող դրօշակն էր զարգարում, նոցա հոգի տալիս, նոյն հոգւովի մի՛ սուրբ գործի համար ի մի ձուլում՝ նսեմացել է նոր անունների շուքի տռաջ։ Ո՞զրմելի անուններ, ոզրմելի առաջնորդներ մի ոզրմելի ժողովրդեան ... ի՞նչ է նոցա զօրութիւնը, ո՞ւր նոցա տռած արդիւնքը—հոգին։ Ձե՛ անտանելի, արդէն հեղձուցիչ է այս նոր արշեաստական մթնոլորդը. իւելամազ և կուրացուցիչ այս կարծեցեալ նոր լոյսը. անուն պէտք է, որ հոգի տայց հոգի պէտք է, որ շունչերէ, ջերմութիւն և կեանք բերէ, որ իւրեմի թելթէ զովարար զեփիւո անցնէ մեր այս անապատ աշխարհի վերայից, ուժգին մի հոգմ

դառնայ մէզն ու մայլ փարտամել, փոթորիկ գառնայ ամպ ու կայծակ ժողովից ջնջել, մաքը ընէ օդը, կենսաբեր անձրևավ երկիրը ցողէ:

Մի անուն, որ ի վեր է քան զամենայն  
անուն, ողի յանուն Յիսուսի Քրիստոսի ամե-  
նայն ծունը կրկնեցի ։ Այս անունը, որ  
Միաձնի Տաճարի Ճակատին է դրոշմած, գր-  
բոշմած ուրեմն և և Ալյովութի Ճակատին. միակ  
Ճմարիտ նշանարանն է, միայն սուրբ, միայն  
երկրպագելի, միայն յաւիտենական ... Յիսուս  
Քրիստոս ... Յիսուս Քրիստոս երեկ և այսօր,  
նոյն և յաւիտեն ։

4. ԱԲԵԳԱՅԻ ՏԻՐԱՄՈՒՆԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՍՈՒՐԲ ԿԱՐԳԵ.



(Հարսնակութիւն \* )

յաքանն բաւական է հա-  
մզու ելու համար, որ  
Եկեղեցու կարգու կա-  
նոնք անփոփոխելի են,  
ժողովը Կաթուղիկո-  
սական վճռով կարող  
է թերին և պակաար  
լրացնել. նոյնը կարէ անել և Կաթուղիկոսն  
ինքնու որ ժողովի իրաւասութիւն առողջն է:  
Նոր կանոնն պետք է Եկեղեցու կանոնադրաս-  
կան սկզբանքի վրաց հաստատուի: Կանոնք  
կիւրանայ միայն այն ժամանակ, երբ նորա  
հիմունքն ու բարոյականացնելու, սրբագրծե-  
լու հանգամանքն այլ ես չկայ, ըստ որում  
այլ ես չի գործազրուիլ. Աթէ սցցպէս ըմբի,  
ինչպէս յաճախ շեշտացինք, այն ժամանակ  
Եկեղեցու կարգու կանոնին ոյժը կիորչի և  
մարդկային կգառնայ, վասն զի Ա. Հոգու ներ-

• Տես Նախորդաց համարում:

1. Բայց աւանդութեանց հակառակելոց առաջնորդ Հարցոն Սրբոց՝ ոչ այլ ինչ է պատճառ. քան թէ տփութիւն և ինչնորդէն անծնանած կամապաշտութիւն։ Եսոքափ. Էջ. 71: